Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
հաշվեքննիչ պալատի
,,28,, ,,փետրվարի,, 2020 թվականի
N24/ Լ որոշման

# ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

# 2021-2023
# ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ
# ԵՎ 2021
# ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

## 1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում Հաշվեքննիչ պալատի գործունեության մեջ տեղի են ունեցել էական տեղաշարժեր՝ պայմանավորված 2018 թվականի ապրիլից, Սահմանադրական փոփոխությունների ուժի մեջ մտնելու արդյունքում, վերահսկիչ ծառայությունների մատուցումից հաշվեքննիչ ծառայությունների մատուցմանն անցմամբ: Այս համատեքստում ընդլայնվել է Հաշվեքննիչ պալատի կողմից նախատեսված և փաստացի իրականացված արդյունքային ցուցանիշների կազմը: Մասնավորապես՝

- 2018 թվականին նախատեսվել և իրականացնել է ISSAI 200 և ISSAI 400 ստանդարտներին համապատասխան, պետական բյուջեի ընդհանուր ծախսերի առնվազն 17.5% ծածկույթի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որը 2019թ.ընդլայնվել է 7.5 տոկոսային կետով:
- 2018 թվականին նախատեսվել և իրականացնել է ISSAI 300 ստանդարտին համապատասխան կատարողականի 2 հաշվեքննություն, իսկ 2019թ.՝ 5:
- 2019 թվականին նախատեսվել և իրականացնել է Հաշվեքննիչ պալատի կատարողականի ինքնագնահատականի նաղնական կազմակերպում ՝ INTOSAI-ի SAI PMF մեթոդաբանության հիման վրա: Այս արդյունքը նախատեսվում է ստանալ նաև 2020թ.-ին:
- ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացության տրամադրում՝ ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների միջոցով: Եթե նախկինում եզրակացությունը տրամադրվում էր պետական բյուջեի կատարման հաշվետվության վերաբերյալ, ապա այժմ այն տրամադրվում է պետական բյուջեի կատարման վերաբերյալ:
- ԵԱՏՄ արտաքին աուդիտի ստանդարտների համապատասխան ԵԱՏՄ շրջանակներում անդամ պետությունների Աուդիտի բարձրագույն մարմինների հետ համատեղ հսկողական միջոցառումների իրականացում: Այս միջոցառումը շարունակական միջոցառում է և բխում է երկրի միջազգային պարտավորություններից:

Հաշվեքննիչ պալատի 2019 թվականի փաստացի ծախսերը, որը կազմել է 11081159.5 հազ.դրամ, 2018 թվականի համեմատ գրեթե չի տարբերվում՝ 1110832.0 դրամ : Հաշվեքննիչ պալատի կողմից մատուցվող ծառայությունների քանակական և որակական աճով պայմանավորված 2020թ. հաստատված բյուջեի աճել է 2019թ.հաստատված բյուջեի համեմատ՝- 44727.5 հազ.դրամով:

## 2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Հաշվեքննիչ պալատի գործունեության նպատակն է հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում պետական և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների և վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության վերաբերյալ Ազգային ժողովին և հանրությանը ժամանակին, մասնագիտական և անկողմնակալ տեղեկատվություն ներկայացնելը:

Իր նպատակների հասնելու համար Հաշվեքննիչ պալատը իրականացնում է գործառույթներ, որոնց վերջնական արդյունքի վերբերյալ գնահատական կարող է հանդիսանալ Հաշվեքննիչ պալատի կատարողականի ինքնագնահատումը:

Համաձայն INTOSAI կողմից սահմանված պահանջների, Աուդիտի բարձրագույն մարմինների կատարողականի գնահատումն իրականացվում է 3-5 տարին մեկ:

| Նպատակը | **Ծրագրի դասիչը և անվանումը** | Ծրագրի վերջնական արդյունքները | | | | | Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Չափորոշիչը | Ելակետը | | Թիրախը | | |
| | | | Ցուցանիշը | Ժամկետը | Ցուցանիշը | Ժամկետը | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| **Հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում պետական** | 1161 | **ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության տարեկան** | **Գնահատականը 1-2 միջակայքում** | **2020թ.** | **Ակնկալվող գնահատականը 3-4 միջակայքում** | **2023թ** | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **և համանքային բյուջեների միջոցների, ստացված փոխառությունների և վարկերի,պետական և համանքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության վերաբերյալ Ազգային ժողովին և հանրությանը ժամանակին,մասնագիտական և անկողմնակալ տեղեկատվություն** | | **ծրագրի կատարողականը՝ Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) մեթոդաբանության հիման վրա (SAI PMF)** | | | | | |

## 3. 4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

### 4.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

| Դասիչը | | Միջոցառման անվանումը | Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը[1] | Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները[2] | Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը[3] |
|---|---|---|---|---|---|
| Ծրագիր | Միջոցառում | | | | |
| Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝ | | | | | |
| 1161 | 11001 | Հաշվեքննիչ պալատի գործունեության և հաշվեքննության իրականացման ծառայություններ | պարտադիր | Հաշվեքննիչ պալատի գործունեություն և հաշվեքննության իրականացման ծառայություններ /Հաշվեքննիչ պալատի պահպանում/ | |